

իսկ Կարապետ, Ալեքսանդր, Կոստանդին եւ Պետրոս՝ հայեր էին թէ հօր եւ թէ մօր կողմէ:

Կը յիշուին նաեւ Գասպար (1619) եւ Ահարոն Վօյլօտները, Հ. Ղուկաս Ինճիճեան (Աշխարհազորութիւն Չորից Մասանց Աշխարհի, Զ. հատոր, էջ 192, Վենետիկ, 1804), կը յիշատակէ:

«Յառաջին պէյս անդ նստան եւ երկու ոմանք յազդէս հայոց, յորոց մին կոչի Գասպար, որ նստաւ ի Պուղտան (Մոլտավիա) . կին նորա շինեաց զԱստուածածնի եկեղեցին հայոց որ ի Եաշ . երկրորդն կոչի Առոն, այսինքն՝ Ահարոն, որ եւ հռոմացաւ . սա շինեաց զվանս Յունաց ժամաւ եւ կիսով հեռի ի մայրաքաղաքէն, որ յանուն նորա կոչի Առոն Վօտա»:

ԱՌԱՋԻՆ ՀԱՂԱՅԱՆՔԸ

Քանի մը հարիւր տարուան ընթացքին, ԺԴ. դարու կէսերէն մինչեւ ԺԸ. դարու վերջերը, հազուադէպօրէն միայն հալածանք կամ դժուարութիւն կրեցին հայերը:

Առաջին հալածանքը տեղի ունեցաւ Շթէֆան-Ռառէշ բնաւոր Վօյլօտին օրով, որ արդէն կարճ իշխանութիւն մը վարեց (1551-1552): Իր երէց եղբայրը, Իլիաս Ռառէշ Վօյլօտը (1546-1551), հինգ տարի կառավարելէ յետոյ երկիրը, ստիպուեցաւ հրաժարիլ իր գահէն եւ Պոլիս երթալով իսլամութիւնը ընդունեցաւ Սուլթան Սիւլէյմանի օրով: Երկրին պօյէտները եւ երեւելիները իշխանական գահը բերին անոր կրտսեր եղբայր Շթէֆան-Ռառէշը՝ յուսալով որ ան տիպար տիրապետութեամբ մը պիտի մոռցնէ իր եղբօր սեւ անունը, ու արժանաւոր յաջորդ մը պիտի ըլլայ իր հօրը Փէթրէ-Ռառէշին: Շթէֆան ուզեց իսկապէս մոռցնել իր հաւատուրաց եղբօրը տխուր համբաւը, եւ իր իշխանութեան առաջին տարին իսկ հրովարտակ մը հանեց որով կը հրամայէր իր բոլոր հպատակներուն յունադաւանութիւն ընդունիլ: Հրովարտակը կը վերաբերէր հայերուն ալ՝ որոնք վայելիք էին մինչեւ այն ատեն կրօնական կատարեալ ազատութիւն: Հայերը ամուր մնացին իրենց պապերուն հաւատքին վրայ, եւ ենթակայ եղան անօրինակ հալածանքի մը, որուն մասին պիտի խօսինք ուրիշ գլուխի մը մէջ: Ըսենք միայն որ Շթէ-

ֆան-Ռառէշ, հազիւ տարի մը անցած, դաւադրութեան մը զոհ դնաց իր զաւակներուն հետ մէկտեղ, 1552-ին:

ԵՐԿՐՈՐԳ ՀԱՂԱՅԱՆՔ

Երկրորդ հալածանք մը կրեցին հայերը Շթէֆան Թօմշա Վօտային օրով, որ նոյնպէս կարճ տիրապետութիւն մը ունեցաւ (1563-1564): Աւելի քաղաքական էր սակայն այս հալածանքին պատճառը: Դէպքը ծագեցաւ հետեւեալ պարագաներուն տակ: Ալեքսանդր Լափուշնէանու Վօյլօտին առաջին տիրապետութեան օրով (1551-1561), իշխանական արքունիքը ապաստանած էր Իաքօպ Հէրաքլիտէ անուն յոյն մը, դաւանութեամբ բողոքական, որ ինքզինքը Բիւզանդիոնի Հերակլ կայսեր սերունդէն կը նկատէր: Ան դաւադրեց Լափուշնէանուի դէմ աջակցութեամբ Ֆէրտինանտ կայսեր, որ իր շահերուն հաւատարիմ Վօյլօտ մը կ'ուզէր տեսնել Մոլտավիոյ գահուն վրայ: Ան ապահովեց նաեւ Սուլթանին համամտութիւնը՝ խոստանալով 20,000 դուկատ: Յաջողեցաւ դաւադրութիւնը, եւ ան նստաւ մոլտավ գահուն վրայ, ուր մնաց երկու տարի (1561-1563): Ան պատմութեան մէջ կը յիշուի Տէսփօթ Վօտա անունով: Ան չկրցաւ զրաւել երկրին համակրութիւնը, ընդհակառակը ատելութիւն սերմանեց իր դրած տուրքերով, կատարած բռնադրաւումներով, եւ մանաւանդ բողոքականութեան քարոզութեամբ: Պօէտները բռնեցին Տէսփօթը եւ գլխատեցին: Յաջորդեց Թօմշան, կարճ ատեն մը տիրելով: Բայց այդ կարճ շրջանին ալ հալածանքի ենթարկուեցան հայերը, որոնք բռնած էին Տէսփօթին կողմը, հաւանաբար անոր նախորդին՝ Լափուշնէանուի օրով իրենց ենթարկուած խստութիւններուն համար: Թօմշային յաջորդեց դարձեալ Լափուշնէանուն (1564-1568) որ շարունակեց հալածանքը հայերուն դէմ: Սուլտանի «հայերը, կ'ըսէ Հաշտու իր Մակնում Էքիսօլօսիֆում երկին մէջ, 1564-ին, մեծ համակրութիւն ցոյց տուին յափշտակիչ Եաքօպ Տէսփօթ Վօտային հանդէպ: Երբ մոլտավ պօյէտները ըմբոստացան արեւմտեան քաղաքակրթութեան այս զոհին դէմ, հայերը միայն եղան որ անձնուիրութիւն ցոյց տուին անոր հանդէպ, եւ իրենք զիրենք ենթարկեցին այսպէս ապադայ յաղթա-